ԱԼԻՔ

Ազգային, հասարակական, քաղաքական, մշակութային օրաթերթ

92-ՐԴ ՏԱՐԻ, ԹԻՒ 252 (24533), հատավաճառ՝ 20000 ռիալ

سال نودودوم - شماره (۲۴۵۳۳) ۲۵۲ - تکشماره ۲۰۰۰۰ ریال - ۸ صفحه

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ

6 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2023

آلیک

چهارشنبه – ۱۵ آذر ۱۴۰۲

روزنامه سیاسی، اجتماعی، فرهنگی

E-mail: info@alikonline.ir www.alikonline.ir

ԻՐԱՆՆ ՈՒ ՌՈՒՍԱՍՏԱՆԸ ՀՈՂԱԿԱԳԻՐ ԵՆ ՍՏՈՐԱԳՐԵԼ ՄԻԱԿՈՂՄԱՆԻ ՊԱՏԺԱՄԻՋՈՑՆԵՐԻՆ ՀԱԿԱԶԴԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«ԱԼԻՔ» - Իրանը եւ Ռուսաստանը ստորագրել են միակողմանի պատժամիջոցներին հակազդելու հռչակագիր: Փաստաթուղթը երկու երկրների անունից ստորագրել են ԱԳ նախարարներ Հոսէյն Ամիր Աբդոլլահեանն ու Սերգէյ Լաւրովը:

Փաստաթղթի պաշտօնական անւանումն է «Ռուսաստանի Դաշնութեան եւ Իրանի Իսլամական Հանրապետութեան հռչակագիրը միակողմանի հարկադրանքի միջոցների հակազդման, մեղմացման եւ փոխհատուցման ուղիների եւ միջոցների մասին»:

Հռչակագիրը ենթադրում է համատեղ գործողութիւններ՝ միակողմանի հարկադրանքի միջոցներին դիմակայելու, դրանք նւազեցնելու եւ փոխհատուցելու ուղիների վերաբերեալ:

Յիշեցնենք, որ Ամիր Աբդոլլահեանը Մոսկայում էր, մասնակցելու մերձկասպեան երկրների՝ Իրանի, Ռուսաստանի, Ղազախստանի, Թուրքմենստանի եւ Ադրբէջանի արտաքին գործերի նախարարների հերթական նիստին:

Իրանը կարեւորել է մերձկասպեան երկրների միջեւ կոնսենսուսի կայացման անհրաժեշտութիւնը

«ԱԼԻՔ» - Կասպից ծովի վերաբերեալ ցանկացած որոշում պէտք է հաշի առնի ափամերձ բոլոր հինգ երկրների միջեւ կոնսենսուսը: Այս մասին երէկ՝ դեկտեմբերի 5-ին Մոսկայում կայացած Կասպից ծովի ափամերձ հինգ երկրների արտգործնախարարների հանդիպման ժամանակ յայտարարել է ԱԳ նախարար Հոսէյն Ամիր Աբդոլլահեանը:

Նա յստակեցրել է, որ Իրանը, Ռուսաստանը, Ադրբէջանը, Ղազախստանը

(Շար. 8-րդ էջում)

Ռուբէն Մելքոնեան.

«Հիմա թուրքերի համար ստեղծել է բարենպաստ իրավիճակ՝ առաջ տանելու իրենց նախապայմանները»

Հայաստանի ատոմակայանի հետ կապած Թուրքիան դեռ 90-ականներից ունեցել է որոշակի ընդգծած մօտեցում: Այս մասին Alpha News-ի հետ զրոյցում ասել է թուրքագէտ Ռուբէն Մելքոնեանը:

«Հայաստանի ատոմակայանի հետ կապած Թուրքիան դեռ 90-ականներից ունեցել է որոշակի ընդգծած մօտեցում, զգայուն է վերաբերուել այդ խնդրին: Դա թուրքական պետական քաղաքականութիւն է, որն այսօր էլ շարունակւում է: Խնդիրն ունի երկուերեք ենթատեքստ: Առաջինը, որ ատոմակայանի գոյութիւնը Հայաստանը դարձնում է այն երկրներից մէկը, որտեղ կայ դէ ֆակտο միջուկային պետութիւն դառնալու հնարաւորութիւն, կամ գոնէ ինչ-որ զէնքեր ստեղծելու հնարաւորութիւն, որտեղ կարող է լինել միջուկային բաղադրիչ, եւ դա կարող է Թուրքիայի համար ունենալ սպառնալիքի նշանակութիւն:

Երկրորդը Հայաստանի էներգետիկ անկախութիւնն է, եւ երրորդը՝ անվտանգային խնդիրը, քանի որ Հայաստանի նկատմամբ տոտալ յարձակումները միշտ ենթադրում են, որ այս երկրում կայ ատոմակայան, որը բաւական մօտ է նաեւ Թուրքիային: Սա, իհարկէ, ոչ իրատեսական սցենարների մէջ կարող ենք տեղաւորել, բայց այնուամենայնիւ թուրքական փորձագիտական դաշտում դա երբեմն քննարկւում է»,- նշել է Մելքոնեանը:

Նրա կարծիքով՝ հիմա Թուրքիայի համար ստեղծւել է բարենպաստ իրավիճակ՝ իրենց նախապայմանները առաջ տանելու համար:

«Հիմա թուրքերի համար ստեղծւել է բարենպաստ իրավիճակ՝ առաջ տանելու իրենց նախապայմանները, ցանկութիւնները, եւ ատոմակայանի հետ կապւած հարցը չբարձրացնելը առնւազն տարօրինակ կը լինէր: Սա շատ օրինաչափ է թուրքական պետական քաղաքականութեան տրամաբանութեան տեսանկիւնից, եւ պէտք է գիտակցել, որ սա Հայաստանի ներքին գործերին միջամտելու բացայայտ փորձ է եւ այն վերացնելու հերթական քայլ»,- եզրափակեց թուրքագէտը:

Վարուժան Գեղամեան.

«Թւացեալ հանգստութիւնը ոչ այլ ինչ է, քան նոր՝ շատ աւելի մեծ աղէտի նախանշան»

Թուրքագէտ Վարուժան Գեղամեանը «Ֆէյսբուք»-եան իր էջում գրում է.

«Երկրում լռութիւն է, թւում է, թէ ամենամեծ աղէտն արդէն կատարւել է եւ կարելի է զբաղւել առօրեայով՝ քաղաքականութիւնից մինչեւ հանգստի պլանաւորում:

Մինչդեռ թւացեալ հանգստութիւնը ոչ այլ ինչ է, քան նոր՝ շատ աւելի մեծ աղէտի նախանշան: Բացասական փոփոխութիւնները կուտակւում են աստիճանաբար, բայց իրականանալու են միանգամից թռիչքաձեւ:

Շատերին թւում է, որ հիմա այս խօսքերը չափազանցութիւն են եւ կարելի ոչինչ չանել, բայց աղէտի պարագայում է այդ «ոչինչ չանելը» բերելու է նրան, որ մի օրում «յանկարծ» աղէտը նորից տեսանելի է լինելու, բայց դրա հետ այլեւս ոչինչ անել հնարաւոր չլինի: Մինչդեռ հիմա է ժամանակը»:

Էդգար Էլբակեանը՝ «ԱԼԻՔ»-ի հետ զրոյցում.

«Առաջին հերթին պէտք է այդ մտայնութիւնը փոխել, որ ինչ-որ բան տալով կարելի է խաղաղութեան հասնել»

Արտահերթ ընտրութիւնները միջոց են դէ ֆակտο իշխանութիւնների ձեռքին անընդմէջ վերարտադրւելու, անընդմէջ վերաթարմացնելու իրենց լեգիտիմութիւնը եւ իրենց իշխելու նկատմամբ «արդարութեան» պաշարը: Այս մասին «ԱԼԻՔ»-ի հետ զրոյցում յայտնեց քաղաքագէտ Էդգար Էլբակեանը՝ անդրադառնալով, հարցմանը, որ ինչու է ՀՀ-ում նոր՝ արտահերթ ընտրութիւններ անցկացնելու թեման կրկին շրջանառութեան դրւել:

«Այն մեթոդ է, որ բռնապետական համակարգերում շատ տարածւած եւ ընդունւած է: Մեզ ամենածանօթ օրինակը՝ էրդողանական Թուրքիան է, որտեղ արդէն մօտաւորապէս 20 տարի էրդողանը իշխանութեան է հէնց այդ գործիքակազմի բանեցմամբ, այսինքն անընդհատ արտահերթ ընտրութիւններ, Սահմանադրութեան փոփոխութիւններ, կառավարման համակարգի փոփոխութեան քայլերով իր իշխանութիւնն է պահում: Այն, բնականաբար, գործող իշխանութիւնների կեանքը երկարացնելու միջոց է: Զուտ ֆորմալ առումով, օրինական միջոցներով պատկերացնելը, որ ՀՀ-ում ընտրութիւններով հնարաւոր կը լինի իշխանափոխութիւն իրականացնել միամիտ ակնկալիք է, ընտրութիւնները ընդամէնը ամրագրրում են գետնի վրայ առկայ եղած վիճակը, մինչեւ ընտրութիւնների պահը, իսկ այս պահին գետնի վրայ առկայ վիճակը ցաւօք յօգուտ դէ ֆակտο իշխանութիւնների է»,- նշեց նա:

Քաղաքագէտը յիշեցրեց, որ իրենք հակահայկական կամ հակարցախեան ուժ էին եւ դա ի սկզբանէ պարզ էր, բոլոր այն մարդկանց համար, որոնք ծանօթ

(Շար. 8-րդ էջում)

«Կինն աշխարհ չէ եկած մինակ հաճելի ըլլալու համար: Կինը եկած է իր խելքը, մտային, բարոյական եւ ֆիզիկական յատկութիւնները զարգացնելու համար: Ինքզինքն յարգող բոլոր կիներուն իդէալը միայն հաճելի ըլլալը պէտք չէ ըլլայ, այլ երկրիս վրայ գործօն բարերար տարր մը դառնալը»

Զապէլ Եսայեան (1878-1941), հայ նշանաւոր գրող, հրապարակախօս եւ գրականագէտ

ARAM®
coffee
ԱՐԱՄ
قهوه آرام
սուրճ
فروشگاه مرکزی:
قائم مقام فراهانی–شماره ۶۴
88303478 եւ 88308730
www.aramcoffee.com
instagram:aram__coffee

Լիլիթ Գալստեան.

«Ազգի յիշողութիւնն ու արմատը ջնջելով՝ մարդուն դարձնում են մանկուրտ»

Շաբաթներ առաջ, երբ փորձեցի կրթութեան խնդիրների, 7-րդ դասարանի Հայոց պատմութեան դասագրքի վերաբերեալ մանկավարժական, ակադեմիական եւ հանրութեան բողոքի խօսքը փոխանցել ԿԳՄՍ նախարարին, ի պատասխան՝ շատ նախանձելի վստահութեամբ նախարարն արձագանգեց՝ համակերպուէք։ Այս մասին ԱԺ յայտարարութիւնների ժամին ասել է «Հայաստան» խմբակցութեան պատգամաւոր Լիլիթ Գալստեանը։

Պատգամաւորի խօսքով, դրան յաջորդել է տարբեր տրամաչափի իշխանական գործիչների հայրենասիրութիւնը, ազգային ինքնութիւնը եւ մեր անցեալը կասկածի տակ դնող եւ ծաղրող տեքստեր, այդ թւում՝ Հանրայինի եթերից։ «Անգամ փորձ արուեց գիտական քննադատութիւնը պիտակաւորել որպէս քաղաքական ռեւանշ»։

Գալստեանը հարց է բարձրացրել, թէ կարո՞ղ ենք իմանալ մասնագիտական ինչ փորձ եւ յանձնառութիւն ունի «Մասնակցային դպրոցի» կազմակերպութիւնը։

Անդրադառնալով գրական մի քանի ստեղծագործութիւն՝ Գալստեանը նշել

է, որ ազգի յիշողութիւնն ու արմատը ջնջելով՝ մարդուն դարձնում են մանկուրտ եւ պատմութիւն խեղաթիւրած դասագիրքը հէնց այս մասին է, որը պէտք է կասեցնել գիտութեան ուժով։

Միեր Մելքոնեան.

«Իշխանութիւնները իրենց առաջ խնդիր են դրել՝ փլուզել կրթական համակարգը»

ՀՀ ԱԺ «Հայաստան» խմբակցութեան պատգամաւոր Միեր Մելքոնեանի ելոյթը՝

«Վերջին շրջանում շատ է խօսւում այն մտաւոր պատերազմի մասին, որը մեր թշնամիները մղում են մեր դէմ։ Այն աւելի ակտիւօրէն սկսեց իրականացել 2018 թւականի այսպէս կոչուած թաւշեայ յեղափոխութիւնից յետոյ եւ սկսուեց կրթական բարեփոխումներից, երբ մեր դպրոցական կրթական համակարգը սկսեց յարմարեցուել ուրիշի կանոններին՝ զրկելով այս համակարգը ինքնուրոյնութիւնից։ Մեր կրթութիւնն անընդհատ ցնցուել է բարեփոխումներից։

Դրանք մեծ համբաւ են բերում այդ բարեփոխումների, կրթութեան մասին այս կամ այն օրինագծի հեղինակներին, ովքեր շարունակում են քանդել մեր կրթական համակարգը։ Դատահական չեն մեր կրթական համակարգի խնդիրները։ Դրանք համակարգային են։ Տպաւորութիւն է ստեղծւում, որ այս խնդիրները ոլորտից անտեղեակ, անզրագէտ մարդկանց գործունէութեան արդիւնք է։ Ոչ, այս ամէնը հեռատես ու հասկացող անհատների աշխատանքի արդիւնք է։ Միայն թէ նրանք իրենց առջեւ տարբեր նպատակներ են դնում։ Ոչ թէ կրթութեան որակի բարելաւում, ոչ թէ երկրի քաղաքացիների համար դրա հասանելիութեան մեծացում, այլ կրթական համակարգի դեգրադացիա, փլուզում։

Կեղծ բարեփոխիչները դպրոցը ստանձնեցին առաջին հերթին հէնց այն պատճառով, որ մարդիկ, ովքեր նախանշում էին մեր երկիրը որպէս մասնատման եւ կլանման նպատակ, հասկանում էին, որ եթէ ուզում ես փոխել երկիրը կամ ընդհանրապէս ոչնչացնել այն, ապա պէտք է վերափոխես մեր կրթական համակարգը։ Առաջին համազարկը հէնց դպրոցին էր՝ ուսումնական ծրագրին, ազգային դաստիարակութեանը, ուսուցչին եւ նրա հեղինակութեանը։ Որովհետեւ դպրոցի միջոցով կարելի է փոխել մարդկանց մտածելակերպը, աշխարհայեացքը,արժեհամակարգը։

Հասարակութեան բարոյական եւ հայրենասիրական համախմբման գործում առանցքային դեր է յատկացւում կրթութեանը։ Դպրոցը միակ սոցիալական ինստիտուտն է, որի միջոցով անցնում են Հայաստանի բոլոր քաղաքացիները։ Անձի արժէքները, իհարկէ, առաջին հերթին ձեւաւորւում են ընտանիքում, բայց անձի առաւել համակարգային, հետեւողական եւ խորը բարոյահայրենասիրական զարգացումն ու դաստիարակութիւնը տեղի է ունենում կրթութեան ոլորտում։ Դրա համար էլ հէնց դպրոցում պէտք է կենտրոնացած լինի ոչ միայն մտաւոր, այլեւ աշակերտի հոգեւոր, մշակութային կեանքը։ Հիմնական արժէքները պէտք է ընկած լինեն դպրոցական կեանքի հիմքում։ Բարոյական եւ հայրենասիրական դաստիարակութիւնը աշակերտի ներդաշնակօրէն զարգացած անհատականութեան երկու հիմնական բաղադրիչներն են։ Բարոյական նորմերը ձեւաւորւում են, առաջին հերթին, հայրենասիրութեան վրայ. դա ոչ միայն սէր է հայրենիքի նկատմամբ, այլ ինքնագնահատականի զգացում է, ազնւականութիւն եւ սեփական երկրի բարօրութեան համար աշխատելու եւ արարելու ձգտում»։

Ովքե՞ր են այդ «թաքնւած» խորհրդատուները. դիտարկում՝ աղմկայարոյց դասագրքի մասին



Պատմաբան, Yerkir.am-ի խմբագիր Վահէ Սարգսեանը գրում է.

«Հայոց պատմութեան 7-րդ դասարանի աղմկայարոյց դասագիրքը ստեղծող «Մասնակցային դպրոց» կրթական հիմնադրամի նախագծի ղեկավար Վահրամ Սողոմոնեանը մեկնաբանութիւն է տուել Նիկոլ Փաշինեան-Աննա Յակոբեան զոյգին պատկանող թերթին՝ անդրադառնալով նոյեմբերի 30-ին «Բնօրրան պատմական յուշարձանների պահպանման հայկական ընկերութիւն» ՀԿ-ի կողմից հրատարուած «ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ» առարկայի 7-րդ դասարանի դասագրքի շուրջ հանրային քննարկումների արդիւնքում կազմուած մասնագիտական եզրակացութեանը։

Նախ այն մասին, թէ ո՞վ է տոյն անձը, ով իրեն իրաւունք է վերապահում քննարկել, աւելին՝ չհամաձայնել կամ որակումներ տալ շուրջ երկու տասնեակ գիտնականների, այդ թւում՝ ԲՈՒՀ-երի դեկանների ու ամբիոնների վարիչների, ԳԱԱ ինստիտուտների տնօրէնների ու առանձին ծանրակշիռ մասնագէտ-պատմաբանների միահամուռ տեսակէտներին ու առաջարկներին։

Նայում ենք կենսագրականը՝ աւարտել է ԵՊՀ, ուշադրութիւն, գերմաներէնի բաժինը, այնուհետեւ, կրկին ուշադրութիւն, պաշտպանել է ատենախօսութիւն... քաղաքագիտութեան բնագաւառում։

Ահա ողջ զաւեշտը. գերմաներէնի մասնագէտ-քաղաքագէտը դուրս է եկել պատմագիտութեան ոլորտի ծանրակշիռ գիտնականների դէմ ու առանց այլեւայլութեան վստահեցնում՝ «գիտական առումով դասագիրքը որեւէ խնդիր չունի»։

Դա նոյն բանն է, որ, օրինակ, սանտեխնիկը նայի մի անորակ ֆիլմ ու ասի՝ ֆիլմը ոչ մի խնդիր չունի։

Իսկ միգուցէ ժամանակին իր՝ Սորոսի հիմնադրամի խորհրդի անդամակցութի՞ւնն է պատճառը, որ Վահրամ Սողոմոնեանն ուժգնօրէն պաշտպանում է հայոց պատմութեան այդկերպ աղաւաղումները եւ, ըստ մասնագիտների յայտարարութիւնների, միտումնաւոր կեղծարարութիւնները։

Էրեբունի պատմահնագիտական արգելոց-թանգարանի տնօրէն Միքայէլ Բաղալեանը, օրինակ, յայտարարել է, որ Վահրամ Սողոմոնեանի հետ մասնաւոր զրոյց է ունեցել, որի ժամանակ վերջինս կասկածի տակ է դրել Էրեբունի-Երեւանի կապը. «Նա կարծես ինձ հասկացնում էր, որ մենք Ուրարտուի հետ ուղիղ կապ չունենք։ Եւ երբ ես ասացի դա մեր ինքնութեան մասն է, պատասխանեց՝ եկէք թողնենք «ինքնութիւն, ժառանգութիւն» հասկացութիւնները։ Նա նաեւ Էրեբունի-Երեւանի կապն էր կասկածի տակ դնում ու նշում էր, որ Էրեբունին կապ չունի այսօրուայ Երեւանի հետ, դա Սովետի ժամանակուայ միֆ է... Իսկ երբ ես ասացի՝ իսկ կարո՞ղ է դու թուրքերի հետ ուղիղ կապ ունես, ինձ ասաց թուրքերի՝ չէ, բայց մենք, հաւանաբար, մոնղոլների հետ կապ ունենք։ Ես ասացի՝ ինքը գուցէ ունի, բայց ես հաստատ մոնղոլների հետ կապ չունեմ… Նման գաղափարներով առաջնորդւող մարդն է այս դասագրքի պատուիրատուն»։

Հետաքրքիր է՝ ո՞վ է կրկնում այն թէզը, որ մենք Ուրարտուի հետ կապ չունենք, կարո՞ղ է Վահրամ Սողոմոնեանը յանկարծ, շատ պատահաբար, կրկնում է թուրքական պատմագիտական շրջանակների այդ նոյն թէզը, որ

(Շար. 7-րդ էջում)

Թէոդիւանագիտութեան հարթակ.

Բաքւի «աչքը հանող» թալիշների լրահոսի վերջին նորութիւնները

«ԱԼԻՔ» - Պարսկալեզու սոցցանցային օգտատէրերի աչքից չի վրիպել Բաքւի հանրապետութեան տիրոյթում գտնւող թալիշների լրահոսի բովանդակութիւնը։ Պակաս ուշագրաւ չէ այն փաստը, որ Բաքւի հետախուզական եւ անվտանգային համակարգի օրակարգում է տեղում լռեցնելը իւրաքանչիւր բողոքի երանգ պարունակող ձայն կամ սոցհարթակ։

X-ում, ինչպէս նաեւ Telegram-ում եւ վերջերս ուշադրութեան կենտրոնում յայտնւած Threads-ում վերահրապարակւած նիւթը վերնագրային անդրադարձի տեսքով անդրադառնում է Բաքւի հանրապետութեանն յուզող այն հարցերին, որոնք, յատկապէս, Իրանին են առնչւում։

Այժմ այն մասին, թէ ինչ են գրում թալիշների լրատւական կայքերն ու ցանցերը.

«Անցեալ շաբաթ Իրանը երկու մեսիջ ուղարկեց, Հարաւային Կովկասում իր տարածաշրջանային դոկտրինը մատնացոյց անելով։ Իսկ նա, ով ճիշտ ընկալումով է «հասկացել» այն, յաջողութեամբ կը մնայ անվնաս։

Վերջին շաբաթւայ ընթացքում Կասպից ծովում տեսանք վերջերս ծառայութեան անցած իրանական նոր «Դէյլաման» ռազմանաւը։

Այս նաւը բազմաֆունկցիոնալ կարողութիւններով կործանիչ է եւ իր նախորդ տեսակների նկատմամբ ունի մեծ առաւելութիւններ։ «Դէյլաման»-ը «Զամարան» կործանիչի արդիականացւած մոդելն է՝ գերժամանակակից սպառազինութեամբ։

Պէտք է հաշուի նստել այն փաստի հետ, որ «Դէյլաման»-ը թալիշների հայրենիքի պատմական անւանումն է։

Դէյլամիները թալիշների անմիջական նախնիներն են, որոնց այն ժամանակ անւանել են դէյլամիներ։

Դէյլամիները նաեւ համարւում են Եմէնի այսօրւայ հութիների նախնիները։ Իրանում պատմաբաններին յայտնի է, թէ ինչի մասին են խօսում թալիշները, երբ խօսքը Դէյլամի մարտիկներին է վերաբերում, որոնք 6-րդ դարից իրանական թագաւորութիւնների բանակների անբաժան մասն էին։

Դէյլամիները նաեւ Իրանում (Մ.Թ. 10-րդ դար) առաջին շիադաւան՝ Ալ-Բոյէ պետական համակարգի հիմնադիրներից եւ աջակցողն են, որի տիրոյթում էր գտնւում Իրաքը՝ Բաղդադ մայրաքաղաքով։ Նրանք ջախջախեցին նաեւ արաբական խալիֆայութեան բանակը։

Դոկտ. Էհսան Մովահեդեանը նոյն առիթով գրել է, որ պատմութեան այս փուլը պէտք է դիտարկել, որպէս հիւսիսային Իրանի վերածնունդի փուլ։ «Իսկ սովորաբար Իրանի վերածնունդը միշտ է եղել հիւսիսից՝ Կասպից ծովի շրջանից»։

Փորձագէտի գրառմանը յաջորդած նիւթը եւս մտածելու առիթ է տալիս։ Մովահեդեանը կարճ գրութեամբ անդրադարձել է իրենց պանթուրքիստական հակումներով յայտնի դարձած հեղինակների եւ այլ հակահիրանական գրքերի ներկայացումն ու թողարկումը Զանջանի համալսարանում շարունակող գրքի ցուցահանդէսում։ «Սա նշանակում է, որ պանթուրքիզմը նոյնպէս պարապ չի նստում, իսկ այս անգամ ներդրում է կատարել Զանջանում»,- գրել է Կովկասի հարցերով աւագ փորձագէտը, ում գրառման տակ մէկ այլ օգտատէր մեկնաբանութիւն տեղադրելով յիշեցրել է, որ վերահսկող մարմինները, որոնք կարող են նստել իւրաքանչիւր աննշան թւացող տողի վրայ, այս դէպքում անհասկանալիօրէն սպասողական դիրքում են։

Մովահեդեանը յիշեցրել է նաեւ, որ Թաւրիզում Թուրքիայի հիւպատոսութեան դիմաց տեղի ունեցած բողոքի ցոյցը խորապէս անհանգստացրել է Բաքւին կամ նրան դուր գալ ցանկացող «200-դոլարանոցներին»։ Նրանք առիթը բաց չեն թողնում սեփական երկրի ներքին խոհանոցը օտարների առջեւ բացելով՝ փորձել լռութիւն թելադրել վճռորոշ պահերին։ «Նպատակը մէկ է՝ Գազայում իրականացւող մարդկութեան դէմ յանցագործութեանը մասնակից Բաքւին ու Թուրքիային կեղտալւայ անելը»,- մեկնաբանել է Մովահեդեանը։

Փորձագէտը յիշեցրել է, որ Թաւրիզում տեղի ունեցած հանրահաւաքի պատճառը Անկարայի ու Բաքւի կողմից սիոնիստական ռեժիմի բանակին անհրաժեշտ նաւթի 60%-ի մատակարարումն էր, ինչը նաեւ Իրանի բարձրաստիճան ղեկավարութեան կողմից եւս բացայայտ քննադատւել է։

Մշակութաբան.

«Ադրբեջանը պատմական շուրջ 6 գերեզմանոց է վերացրել, որտեղ առկայ են 12-13-րդ դարերի խաչքարեր»

2020 թւականի Արցախեան 44-օրեայ պատերազմի ժամանակ եւ 2023 թ. սեպտեմբերի 19-ից արցախցիներին իրենց հայրենիքից բռնի տեղահանելուց յետոյ Ադրբեջանը շարունակեց պատմամշակութային ժառանգութեան ոչընչացումը՝ խախտելով միջազգային բոլոր նորմերը: Ինչ նորմեր են խախտել, ինչ քայլեր կարելի է ձեռնարկել եւ այլ հարցերի վերաբերեալ զրուցել ենք մշակութաբան Արմինէ Տիգրանեանի հետ:

- Ադրբեջանը, այսպէս ասած՝ մարսեց Զուղայի խաչքարերի վերացումը, Գանձակի, Շահումեանի, Նախիջեւանի պատմամշակութային ժառանգութեան ոչնչացումը, որոշ չափով՝ նաեւ սեփականաշնորհումը, եւ նոյնը հիմա շարունակում է Արցախի դէպքում: Ինչ է արւում այս ուղղութեամբ:

- Այն, որ Ադրբեջանը ցանկանում է ոչ միայն Հայաստանի տարածքային իւրացման ճանապարհով հասնել իր գերնպատակին, այլեւ ոչնչացնել այդ տարածքում ապրող հազարամեայ պատմութիւն ունեցող ժողովրդի ինքնութիւնը, պատմութիւնը, լինելիութեան ապագան, արձանագրուած փաստ է, որի մասին խօսում են ոչ միայն հայկական իրականութեան, այլեւ Եւրոխորհրդարանի տիրոյթում, եւ 2023 թ. հոկտեմբերի 12-ին ԵԽԽՎ բանաձեւով յստակ արձանագրուեց, որ Ադրբեջանի կողմից հայկական պատմամշակութային ժառանգութեան ոչնչացումը նոր իրողութիւն չէ, եւ այն Ադրբեջանի 100-ամեայ քաղաքականութեան բաղկացուցիչ մի մասն է:

Բացի այդ, բանաձեւը յստակ նշեց, որ Ադրբեջանի քաղաքականութիւնը համակարգուած յանցագործութիւնների շարք է, այդ թւում կան կասկածներ՝ էթնիկ զտման հիմքով: Այս կտրուածքով կարող ենք ասել, որ Ադրբեջանը ոչ միայն ոչնչացնում է նիւթական կառոյցները եւ վնաս հասցնում նիւթական օբիեկտներին եւ արժէքներին, այլեւ դրանց ոչնչացմամբ ցանկանում է հերքել տարածաշրջանում Արցախի ժողովրդի ապրելու պատմութիւնը եւ շարունակականութեան հնարաւորութիւնը: Այդ պատճառով Ադրբեջանը փորձեց բռնի տեղահանութեան, տոտալ հայաթափման ենթարկել ողջ Արցախը, որպէսզի հնարաւորութիւն չտայ վերստեղծելու մշակութային ինքնութիւնը:

- Շինարարութեան անւան տակ էլ վերացնում են հայկական գերեզմանոցները:

- Այո, սա նոր քաղաքականութիւն չէ: Նոյեմբերի 9-ի եռակողմ համաձայնագրի ստորագրումից յետոյ, երբ Ադրբեջանի կողմից բռնազաւթեց Արցախի տարածքի մեծ մասը, Ադրբեջանը գլոբալ ճանապարհաշինարարական աշխատանքների անւան տակ փորձեց ոչնչացնել պատմական մի շարք գերեզմանոցներ, այդ թւում՝ Շուշիի, Սղնախի գերեզմանոցները: Վերջերս Ադրբեջանը ոչնչացրեց Շուշիի երկու պատմական գերեզմանոցներ՝ 18-19-րդ դարերի, որտեղ առկայ են 12-13-րդ դարերի խաչքարեր, բազմաթիւ տապանաքարեր, որոնք փաստում էին ոչ միայն արցախահայերի գոյութիւնը, այլեւ հարուստ տեղեկատուութիւն՝ արցախեան կենցաղի, հարուստ պատմութեան մասին: Սա ծանր կորուստ է, որովհետեւ պատմական գերեզմանոցների ոչնչացումը հէնց այն թիրախային ուղղութիւնն է, որով Ադրբեջանը փորձում է վերացնել հայերի ներկայութիւնը փաստող նիւթական ապացոյցները: Վերացուել է շուրջ 6 պատմական գերեզմանոց:

- Օկուպացուած Արցախում կան մի շարք թանգարաններ, պատկերասրահ, շատ ցուցանմուշներ, բնականաբար, հանել հնարաւոր չի եղել: Այս ամէնն Ադրբեջանը սեփականաշնորհելու է, ու իրենց գոյութեան 100 տարին մոռանալով՝ ներկայացնելու են, որ չգիտես՝ որ դարից է ու իրենցն է: Շատ մասնագէտներ ունենք, գրքեր ենք տպագրում, բայց պայքարը նաեւ սոցիալական ցանցերում է: Ինչ են անում մեր մշակութաբանները:

- Այն, ինչ Ադրբեջանը չի կարողացել պատմականօրէն ստեղծել՝ այսօր փորձում է արդէն իսկ ստեղծուածը իւրացնել եւ վերագրել իր պետութեանը: Այն, որ օկուպացուած տարածքներում թողել ենք բազմաթիւ թանգարաններ, հազարաւոր ցուցանմուշներով՝ մինչեւ 2023 թ. սեպտեմբերի 19-ի ռազմական օկուպացիայի ժամանակահատուածը, կարող էինք խօսել շուրջ 20.000 թանգարանային ցուցանմուշների ու 12 թանգարանի մասին, բայց, ցաւօք, պէտք է արձանագրենք, որ սեպտեմբերի 19-ից յետոյ թանգարանների, ցուցանմուշների թիւը համալրուեց: Կորուստը ոչ միայն այդ արժէքաւոր ժառանգութիւնն է, այլեւ այն, որ վտանգւում է մշակոյթի իրաւունքի իրացման կոնցեպտը, որը սերտօրէն առնչւում է ինքնութեան, կրթութեան իրաւունքին:

Նշեմ, որ 44-օրեայ պատերազմից յետոյ ակադեմիական հանրոյթը՝ հնագէտ Համլետ Պետրոսեանի ղեկավարութեամբ, սկսեց Արցախի մշակութային ժառանգութեան մոնիտորինգ նախաձեռնութիւնը, ստեղծուեց կայք, որը համագործակցում է միջազգային տարբեր գործընկերների հետ, այդ թւում՝ Կովկասի ժառանգութեան միջազգային կենտրոնի, որն արբանեակին տեւալներ է փոխանցում: Կայքում ներկայացւում է Արցախի մշակութային հարուստ ժառանգութիւնը, ցոյց է տրւում, թէ Ադրբեջանն ի՞նչ ուղղութիւններով է փորձում դա ոչնչացնել, եւ դրան տրւում է համարժէք պատասխան: Պայքարը գնում է նաեւ իրաւաբանական ոլորտում: 2021 թ. դեկտեմբերի 7-ին Հաագայի դատարանը որոշում հրապարակեց՝ փորձելով Ադրբեջանին արգելել ոչնչացնել հայկական ժառանգութիւնը:

Այսօր, երբ Գանձասարի, Ամարասի, Դադիվանքի եւ հայկական պատմական այլ քրիստոնէական եկեղեցիների պատմութիւնը կեղծւում է, եւ դրանք համարւում են աղւանական, սա հարուած է ոչ միայն Արցախի ժողովրդին, այլեւ քրիստոնէական ողջ հանրութեանը, եւ սա յանցագործութիւն է՝ ուղղուած ողջ մարդկութեանը, քանզի Արցախի ժառանգութիւնը մոլորակի մշակութային ժառանգութեան իւրօրինակ գոյնն է, իսկ ժողովուրդն այսօր հնարաւորութիւն չունի վերստեղծել իր ժառանգութիւնը: Սա մոլորակի մշակութային աղքատացում է: Հռոմի ստատուտը նշում է, որ ժառանգութեան ոչնչացումը նաեւ մարդկութեան արժանապատուութեան դէմ ոտնձգութիւն է համարւում:

- Կարծում էք՝ փաստաթղթերը կամ դատարաններն ազդեցութիւն կունենան Ադրբեջանի վրայ:

- Երբ Հաագայի դատարանը 2021 թ. յորդորեց զերծ մնալ ոչնչացումներից, Ադրբեջանը որոշ իմաստով փորձեց զսպել ժառանգութեան ոչնչացման եւ պատմութեան իւրացման իր քաղաքականութիւնը եւ բացայայտ դա չանել: Իսկ երբ Ադրբեջանի մշակոյթի նախարար Քերիմովը յայտարարեց, որ պատրաստւում է յանձնաժողով ստեղծել՝ եկեղեցիների արձանագրութիւնները ոչնչացնելու հետ կապուած, միջազգային կոշտ արձագանգը ստիպեց, որ Ադրբեջանը յետ կանգնի այդ որոշումից եւ յանձնաժողովի գոյութիւնը բացայայտ դադարեցնի: Լաւագոյն լուծումը կը լինի, եթէ ԻԻՆԵՍԿՕ-ն անկախ փորձագիտական այց կազմակերպի Արցախ: Գործընթացը դադարեցւում է, եւ ԻԻՆԵՍԿՕ-ն իր առաքելութիւնն իրականացնելու փոխարէն՝ շարունակում է Ադրբեջանին «խրախուսել» ու նրան նշանակել իր գլխաւոր կոնֆերանսի փոխնախագահող երկիր: Միջազգային օրէնքների ոչ ճիշտ գործարկումը չի նշանակում, որ մասնագէտները չպէտք է շարունակեն աղաղակել այս ոչնչացումների մասին:

- Միջազգային կառոյցների ներկայացուցիչներն են ուզում գնալ Արցախ, ԻԻՆԵՍԿՕ-ի դէպքում Ադրբեջանն իր ճանապարհն էր առաջարկել, բայց նրանք հրաժարւել էին: Այդ փորձագէտները որքանո՞վ են անկախ, ճիշտ չէ՞ր լինի, որ նրանց թւում նաեւ հայ լինի:

- Ազգային կողմնորոշումը գիտութեան մէջ այնքան էլ կարեւոր չէ, որովհետեւ գիտնականը պէտք է վեր լինի ազգային պատկանելութիւնից, չէզոք ու արդարացի քննի հարցը, բայց ճիշտ էք. այն ներկայացուցիչները, որոնք ՄԱԿ-ի կողմից ներկայացած էին եւ սեպտեմբերի 19-ից յետոյ եկել էին տարածաշրջանում իրողութիւնը գնահատելու, կարելի է ասել, որ քաղաքականացած յայտարարութիւն տարածեցին՝ նշելով, որ այդքան էլ բռնութեան հետքեր չկան, ու զարմացել են, թէ ինչո՞ւ է Արցախի ժողովուրդը լքել այն: ԵԽԽՎ բանաձեւում էլ նշւել էր, որ Արցախի ժողովուրդն Ադրբեջանի ռազմական ագրեսիայի արդիւնքում, կեանքի տոտալ սպառնալիքից ելնելով, վախի մթնոլորտում լքել է իր պատմական հայրենիքը: Ունենք իրարամերժ երկու ուղղութիւն: Բայց օրակարգում մնում է հարցը, որ իսկապէս անկախ փորձագէտներ են պէտք, ու եթէ նրանց թւում հայեր լինեն՝ դա կը նպաստի երեւոյթի ճշմարտացի ներկայացմանը: Իսկ եթէ լինեն միջազգային փորձագէտներ, որոնք չեն ներկայացնի խաւիարային դիւանագիտութիւն, այս պարագայում կարող ենք խնդրի փոքր-ինչ լուծման որոշակի յոյսեր ունենալ:

- Ունենք նաեւ Արցախի բարբառի պահպանման խնդիր: ԿԳՄՍ նախարարութիւնը նշեց, որ Հադրութի բարբառը ցանկանում են գրանցել ԻԻՆԵՍԿՕ-ում, բայց դա հարցի լուծո՞ւմ է:

- Բարբառը համարւում է ոչ նիւթական մշակութային ժառանգութիւն, ու այն պահպանելու համար անհրաժեշտ է կիրառել, փոխանցել սերունդներին: Այդ արժէքի հանրահռչակումը կարող է որոշակի դերակատարում ունենալ: Հադրութի բարբառը շատ իւրայատուկ, կոլորիտային ինֆորմացիա է պարունակում, կարծես թէ կորաւորել է այդ համայնքի կարեւոր մշակութային առանձնայատկութիւնները:

168.am

Արման Թաթոյեան.

«Այս իրավիճակում խաղաղութեանը սպասում է ոչ թէ խաչմերուկ, այլ՝ փակուղի»

Քանի դեռ Հայաստանի գիւղերի եւ քաղաքների հարեւանութեամբ, համայնքների միջեւ ճանապարհներին կան ադրբեջանական զինուած ծառայողներ, մեր քաղաքացիները շարունակելու են գտնուել վտանգի տակ, իսկ ադրբեջանական յանցաւոր արարքները շարունակւելու են, քանի դեռ այդ երկրի ֆաշիստական իշխանութիւնը գործում է պատասխանատուութեան բացակայութեան պայմաններում: Այս մասին «Ֆէյսբուք»-եան իր էջում գրել է ՀՀ մարդու իրաւունքների նախկին պաշտպան Արման Թաթոյեանը:

«Որքա՞ն կարելի է յանուն իշխանութեան ձեւացնել, թէ ամէն ինչ լաւ է ու դուք էլ տիրապետում էք երկրի անվտանգութեան լուծումներին: Յանուն պաշտօնի՝ առաջ էք բերել անիրատեսական նպատակներ ու դրանք արդարացնելու համար կոծկել ու քողարկել էք ադրբեջանական յանցանքները: Եւ այս ամէնն արել ու անում էք սեփական քաղաքական իշխանութիւնը պահելու համար մրցաւանջային վախերի պատճառով:

Այսպէս են բաց թողնուել կամ էականօրէն նւազեցուել մեր երկրի անվտանգութեան հիմնարար լուծումների (օրինակ՝ ՀՀ սահմանների շուրջ անվտանգութեան գօտու ստեղծումը) համար պայքարի հնարաւորութիւնները: Շատ հարցերում Ադրբեջանն ամրապնդել է իր դիրքերը, ստեղծել է սեփական քայլերի իրաւական [թէեւ արհեստական] հիմքերը, խաղաղութեան կեղծ շղարշի ներքոյ ամրապնդել է հայատեացութիւնը: Հիմա էլ նոյն սանձարձակ պահւածքով շարունակում է յանցանքները մեր քաղաքացիների նկատմամբ, ինչպէս ցաւօք տեղի ունեցաւ դեկտեմբերի 4-ին:

Մեզ համար սրա գինը հայրենիքն է, մարդու կեանքն է՝ զինուորականի ու քաղաքացիական բնակչի կեանքը: Մինչդեռ, Հայաստանի իւրաքանչիւր զինուորական ադրբեջանական յանցաւոր արարքներից պաշտպանում է իր հայրենիքը, այդ հայրենիքում ապրողին, ու նրանց կեանքը միջազգային պաշտպանութեան ներքոյ է:

Որքան ժամանակ է՝ փաստերով ապացուցում եմ, որ Ադրբեջանի իշխանութիւնը չունի խաղաղութեան մտադրութիւններ:

Ուստի, մէկ բան յստակ է. քանի դեռ Հայաստանի գիւղերի եւ քաղաքների հարեւանութեամբ, համայնքների միջեւ ճանապարհներին կան ադրբեջանական զինուած ծառայողներ, մեր քաղաքացիները շարունակելու են գտնուել վտանգի տակ, իսկ ադրբեջանական յանցաւոր արարքները շարունակւելու են, քանի դեռ այդ երկրի ֆաշիստական իշխանութիւնը գործում է պատասխանատուութեան բացակայութեան պայմաններում:

Այս իրավիճակում խաղաղութեանը սպասում է ոչ թէ խաչմերուկ, այլ՝ փակուղի»,- գրել է նա:

News.am

Վարդան Ոսկանեան.

«Խնդիրը ոչ թէ «Արեւմտեան Ադրբեջան» բարբաջանքն է, այլ հէնց արհեստածին Ադրբեջանն ինքը»

Վարդան Ոսկանեանը տելեգրամեան իր ալիքում գրում է.

«Հայաստանում հիմա փորձում են ապացուցել, որ հազարամեակների պետականութեան աւանդոյթ ունեցող մեր երկիրը պատմութեան մէջ երբեւէ գոյութիւն չունեցած ինչ-որ «Արեւմտեան Ադրբեջան» չէ:

Մինչդեռ պարադոքսն այն է, որ Ադրբեջան կոչող արհեստածին կազմաւորումն ինքը մինչեւ 1918 թ. երբեք Ադրբեջան չի եղել եւ չի ունեցել որեւէ առանձին բիւրեղացած ինքնութիւն ու պետականութիւն, ուստի նաեւ դրա աւանդոյթ:

Պատմական եւ իրաւական լեգիտիմութեան առումով բացարձակօրէն խոցելի այս կազմաւորումը գոյացել է հայութեան, իրանական եւ կովկասեան ժողովուրդների բնիկ տարածքների վրայ օսմանեան սիւնների միջոցով, ցեղասպան ծաւալապաշտական քաղաքականութեան եւ պանթուրքական այլատեաց գաղափարախօսութեան հետեւանքով:

Հետեւաբար՝ խնդիրը ոչ թէ «Արեւմտեան Ադրբեջան» բարբաջանքն է, այլ հէնց արհեստածին Ադրբեջանն ինքը, ինչից բխում է, որ լուծումներն էլ բոլորովին այլ դաշտում են»:

168.am

Բացառիկ շրջայցի կազմակերպում՝ Ս. Ամենափրկիչ վանքի Խաչատուր վրդ. Կեսարացու անւան թանգարանի շէնքի հիմնադրման 52-ամեակի առիթով

Հովանաւորութեամբ Սպահանի հայոց թեմի Թեմական խորհրդի եւ կազմակերպութեամբ Ս. Ամենափրկիչ վանքի Խաչատուր վրդ. Կեսարացու անւան թանգարանի տնօրէն Զարեհ Ղարախանեանի, թանգարանի շէնքի հիմնադրման 52-ամեակի առիթով, հինգշաբթի եւ ուրբաթ՝ նոյեմբերի 30-ի եւ դեկտեմբերի 1-ի երեկոյեան, սկսեալ ժամը 18:30-ից, յոբելեար թանգարանի ներքեւի յարկում իրականացուեց բացառիկ շրջայց՝ «Մի գիշեր թանգարանում» խորագրով։

Երկօրեայ ժամանակաշրջանում նախատեսուած շրջայցը տեղի ունեցաւ 14 սեանսների ներքոյ, իւրաքանչիւրի տեւողութիւնը 30 րոպէ։

Սկզբում թանգարանի մուտքի մօտ այցելուներին դիմաւորում եւ ծրագրի մասին հարկ եղածը բացատրում էր Կարին Տէր-Մարտիրոսեանը, այնուհետեւ շրջայցի մեկնարկը տրւում էր առաջին կրպակից, որտեղ նորջուղայեցի խոջան ու իր աշակերտը ներկայացնում էին հայ վաճառականի առօրեայ աշխատանքից մի դրւագ։ Նշելի է, որ ծրագրի ամբողջ ընթացքում համապատասխան բացատրութիւններ էր սփռւում՝ պարսկերէն լեզուով։

Երկրորդ հանգրւանը թանգարանի Խաչատուր վրդ. Կեսարացու կրպակն էր, ուր ցուցադրւած է Նոր Ջուղայում պատրաստւած Միջին Արեւելքի երրորդ տպագրութեան մեքենան, պատկան տառերն ու գործիքները եւ տպագրւած առաջին գիրքը. այստեղ Խաչատուր վրդ. Կեսարացին եւ իր աշակերտը գեղեցիկ պատկերացում տուեցին այն օրերին գրքի տպագրութեան համար տարւող տքնաջան աշխատանքից։ Լայն բացատրութեամբ ծանօթացուեց վրդ. Կեսարացին՝ որպէս Միջին Արեւելքում առաջին տպարանի հիմնադրող։

Յաջորդ կանգառում նորջուղայեցի հայուհու եւ իր դստեր տնային աշխատանքից մի պատկեր ներկայացնելով՝ հանդիսատեսին ցուցադրուեց հայ տիկնոջ կարեւոր դերը ընտանիքի կառավարման գործում։

Այնուհետեւ ներկաները կանգ առան Սարգիս Խաչատրեանի երկու գեղանկարչութիւնների առջեւ, որտեղ տեսողական էֆեկտի միջոցով կենդանացել էին այդ նկարները, ասես դրանցից մէկում կենդանի ալեկոծւում էր Սեւանայ լիճը եւ ղօղանջում կղզու վանքի զանգը, իսկ միւսի մէջ կենսունակ էր գեղջկական կեանքը։ Այս բաժնին զուգահեռ կենդանի կատարմամբ հնչեց «Հորովել»-ը։

Շարունակութեան մէջ այցելութիւն կատարուեց հոգեւորականների հագուստների կրպակ, ապա ձեռագիր մատեանի վրայ տեսողական էֆեկտով ցուցադրուեց գրչագրութեան արուեստը։

(Շար. 6-րդ էջում)

ԴԱՍՏԻԱՐԱՆ ՀԵՏՔԵՐՈՎ

Քչերին է յայտնի թէ ո՞վ էր Խաչատուր Աբովեանի որդին



Ընդամէնը ութ տարեկան էր Վարդանը, երբ զրկուեց հօրից: Նրա հետագայ խնամքն ու դաստիարակութիւնը մնաց մօր՝ Էմիլիէի[1] վրայ, որն ամուսնու առեղծուածային անհետացումից յետոյ ապրեց 22 տարի եւ մահացաւ 1870 թւականին:

Ինը տարեկանից Վարդանը (Վարդան Աբովեան) սկսում է սովորել Թիֆլիսի ազնուական գիմնազիայում, ապա «Ներսիսեան» դպրոցում: Կաթողիկոսը նախատեսել էր նրան կրթութեան տալ Մոսկուայի «Լազարեան» ճեմարանի արեւելեան լեզուների բաժնում: Սակայն հիւանդութեան եւ այլ պատճառներով Վարդանը դուրս է գալիս «Ներսիսեան» դպրոցից, միաժամանակ զրկւում է «Լազարեան» ճեմարանում սովորելու հնարաւորութիւնից:

Մօր՝ Էմիլիէի մեծ ջանքերի շնորհիւ նա 1854 թւականից մինչեւ 1859 թւականը սովորում է Խարկովի մասնաւոր պանսիոնում, ապա տեղափոխւում է Դորպատ եւ 1860 թւականից դառնում համալսարանի ուսանող, որը հայազգի պատանիներից առաջինն ընդունուել եւ աւարտել էր նրա հայրը: Նիւթական սուղ պայմանների պատճառով Վարդանը համալսարանը չի աւարտում:

Համալսարանում իր ղեկավարի թոյլտուութեամբ քննութիւն է յանձնում՝ Գիմնազիայի սեմինարիայի ուսուցչի կոչում ստանալու համար: Եօթ տարի շարունակ դասաւանդում է ռուսաց լեզու, պատմութիւն, գեղագրութիւն՝ հեռաւոր Լիֆլանդիայի նախ Ֆելին գիւղաքաղաքում, ապա՝ Տալլին քաղաքի տարբեր ուսումնական հաստատութիւններում:

1869 թւականին մօր խնդրանքով Վարդանը վերադառնում է Անդրկովկաս եւ անմիջապէս ուսուցչի պաշտօն վարում Ախալքալաքում: Պայմանները ստիպում են Վարդանին 1875 թւականին տեղափոխուել Էջմիածին, որտեղ հինգ տարի ուսուցչութիւն է անում «Գէորգեան» ճեմարանում, այնուհետեւ տասը տարի ապրում եւ աշխատում է Երեւանի թեմական դպրոցում:

Վարդան Աբովեանը մահացել է 1896 թւականի նոյեմբերին եւ թաղուած է Ս. Գայիանէ եկեղեցու բակում:

Վարդան Աբովեանը ամուսնացել է Կատարինէ Եարալեան-Աբովեանի հետ: Նրանք ունեցել են ութ զաւակ, որոնցից Խաչատուրը, Վահանն ու Պետրոսը մահացան դեռ մանուկ հասակում. մնացած երեք տղաներին՝ Կոնստանտինին, Լեւոնին, Աշոտին և երկու դուստրերին՝ Շուշանիկին, Վիկտորիային մեծացրել է ու կրթութեան տուել մայրը՝ Կատարինէն, քանի որ Վարդանը շուտ մահացաւ, երբ երեխաներից ոչ մէկը դեռ չէր հասունացել:

(Աղբիւր՝ «Գրքասէր»)

---

1) Էմիլիէն Ռուսաստանի գերմանուհի էր (Ա.)

ԴԱՍՏԱՔՂ

«Մենուայի անէծքը» Մենուայի ջրանցքի կառուցումը եւ արձանագրութիւնները

(Արեւելահայերէնի վերածուած)

Կազմեց ՊԵՏՐՈՍ ԹՈՎՄԱՍԵԱՆԸ

Ուրարտուի Իշպուինի գահակալը (825-810 թթ. Ն.Ք.) եղաւ բացառիկ ղեկավար դէմք. նա դեռեւս ողջ էր, երբ իր երիտասարդ զաւակին՝ Մենուային գահ բարձրացրեց եւ ինքը մնաց որպէս խնամակալ թագաւոր, ինչ որ շատ հազուագիւտ պատմական արարք էր այդ հին պատմաշրջանում:

Իշպուինիի մահից յետոյ իր որդին Մենուան շարունակեց թագաւորել մենակ՝ մօտ քառորդ դար (810-786 թթ. Ն.Ք.) դառնալով Ուրարտուի հզօրացման կերտիչը: Մենուայի անունը բուն հայկական է. ծագած՝ բնիկ հայերէն մե(ն) կամ մի(ն) բառից, որ կը նշանակէ մէկը կամ միակը[1]: Մենուայի շինարարական գործունէութեան գլխաւոր մեծագործութիւնը, իր անունով կոչւող Մենուապիլի նշանաւոր ջրանցքն էր, որը երկարում էր 72 կմ.: Նա այս ջրանցքի կառուցման մասին արձանագրութիւններ է թողել տարբեր տեղերում՝ ջրանցքին կից, որոնք փորագրուած են ժայռերի վրայ, եւ բոլորն էլ յիշատակում են Մենուայի կողմից այս ջրանցքի կառուցման մասին: Այդ բազմաթիւ արձանագրութիւններից բարեբախտաբար միայն 14 հատը մինչեւ օրս չեն վնասուել: Դրանցից մէկի մէջ Մենուան ասել է. «Խալդիսի[2] շնորհատու զաւակներին, Մենուաս Իսպուինեան այս ջրմուղը քաշեց. Մենուապիլի է անունը: Խալդիսի մեծազօր որդիներին, Մենուասից, որ է հզօր արքայ, մեծ արքայ, Բիայնայի թագաւոր, որ բնակւում է Տուսբա քաղաքում: Մենուաս ասում է՝ ով որ այս արձանագրութիւնը կը քանդի, ով որ կը վնասի, ով որ տեղափոխի, ով որ ուրիշին վերագրի ասելով, ես այս ջրմուղը քաշեցի, մէկը եւ միւսը թող Խալդիս, Տէիսպաս եւ Արդինիս աստուածներ, իրեն իր տեղը, իր սերունդը, իր քաղաքը աշխարհի երեսից կորցնեն»[3]: Մենուայի այս անէծքները ուղղուած էին Ուրարտուի բոլոր թշնամիներին, եւ ի մասնաւորի ամենամօտիկ ախոյեան՝ հզօր Ասորեստանին:

Մենուապիլիի կառուցման մասին Մենուայի թողած արձանագրութիւնների մէջ իր յիշած անէծքները, եւ իր մտահոգութիւնը ու գուշակումը շատ արդարացի էին: Մենուապիլին կառուցելուց դարեր յետոյ այդ հրաշակերտ մեծագործութիւնը վերագրուեց Ասորեստանի Շամիրամ թագուհուն. եւ կոչուեց «Շամիրամագետ» կամ «Շամիրամի Ջրանցք»:

(Քաղուած՝ «ՊԱՏՄԱՔԱՂ», թիւ 34-ից, 26 նոյ. 2023 թ.)

---

1) Ռաֆայէլ Իշխանեան, Պատկերազարդ Պատմութիւն Հայոց, Ա Գիրք, Երեւան-Արեւիկ, 1989, էջ 21:

2) Խալդիսը կամ Խալդը Ուրարտուի մեծագոյն աստուածն էր. այդ պատճառով Ուրարտուն կոչւել է նաեւ Խալդեան թագաւորութիւն, որովհետեւ հին ժամանակ սովորութիւն կար ժողովուրդներին կամ պետութիւններին կոչել իրենց պաշտած հիմնական աստծոյ անունով. ինչպէս ասորեստանցիների պարագային Աշուր աստուածը:

3) Եղիա Քասունի, Նախահայկական Հայաստան, էջ 31 եւ Հայ Ժողովրդի Քրեստոմատիա, հատոր 1, Երեւան, 1981, էջ 50:

الأرمنية باللغة ، 183 ، 184 ، ص منية

Աղթամարի կաթողիկոսական աթոռի հիմնադրութիւնը՝ 1113 թ.

(Արեւելահայերէնի վերածուած)

Աղթամարի կաթողիկոսական աթոռի հիմնադրութիւնը տեղի ունեցաւ 1113 թ.-ին, երբ Կիլիկիայում Բարսեղ Ա Անեցի կաթողիկոսի մահից յետոյ, կաթողիկոս ընտրուեց Գրիգոր Գ Պահլաւունին (1113-1166 թ.թ.), որն իր երիտասարդ տարիքում էր, հազիւ 20 տարեկան: Այս ընտրութեանը բողոքեց Աղթամարի Դաւիթ եպիսկոպոսը, որ ինքն իրեն համարում էր կաթողիկոսութեան արժանի, տրամաբանելով, թէ նորընտիր կաթողիկոսը շատ երիտասարդ է, եւ թէ Աթոռը գտնւում է Հայաստանից դուրս՝ Կիլիկիայում:

Աղթամարում բողոքի ալիքը աւելի սաստկացաւ: Ամրացնելու համար իր իշխանութիւնը՝ Աղթամարի Աբղլմսեհ[1] իշխանը 1113 թ.-ին, իր որդուն՝ Դաւիթ եպիսկոպոսին կաթողիկոս օծել տուեց Արծրունեաց թագաւորութեան հիմնադիր՝ Գագիկ Ա Արծրունու (915-921 թ.թ.) տարիներին կառուցած Աղթամարի Ս. Խաչ եկեղեցում:

Աղթամարում կաթողիկոսական աթոռի հիմնադրութիւնը կարելի էր անհրաժեշտ տեսնել, որովհետեւ պատմական զարգացումները ստիպել էին, որ Ամենայն հայոց կաթողիկոսական աթոռը 1066 թ.-ին Հայաստանից դուրս տեղափոխուէր, Կիլիկիոյ հիւսիսային սահմանամերձ Ծամնդաւի շրջանը: Հիմնական պատճառն այն էր, որ այդ ժամանակ սելջուկ թուրքերը ներխուժել էին Հայաստան, եւ կաթողիկոսական աթոռը շատ վտանգւել էր[2]:

Այսպէս, Արծրունիների Խեղենիկեան իշխանութիւնը լաւատեղեակ լինելով, որ շատ անհրաժեշտ էր ունենալ կրօնական մի աթոռ, դա էր կրօնաքաղաքական պետութիւնների ժամանակաշրջանի թելադրանքը: Աբղլմսեհ իշխանի այս քայլն ունէր մէկից աւելի նպատակներ. Աղթամարի կաթողիկոսութեան հիմնադրութիւնը զօրացնելու էր Վասպուրականի հայութեան դիրքերը սելջուկ թուրքերի տիրապետութեանը աւելի ուժգնօրէն դիմադրելու համար. եւ յաջորդ քայլը լինելու էր, աւելի զօրացնել իշխանութիւնը՝ այն վերածելով թագաւորութեան, ինչ որ տեղի ունեցաւ շատ աւելի ուշ 1465 թւականին[3]:

Պէտք է նշել, որ թէեւ ոմանք Աղթամարի կաթողիկոսութեան հիմնադրութիւնը նկատում են բացասական մի զարգացում մեր պատմութեան մէջ, սակայն Աղթամարի աթոռը նպաստեց հարաւային Հայաստանի ազգային եւ եկեղեցական կեանքի զարգացմանը, ու դարձաւ կարեւոր մի գործօն հարաւային Հայաստանի ներքին ինքնավարութեան պահպանման համար:

---

1) Աբղուլ-Մասիհ («Ա.»)

2) Արամ Յովհաննիսեան, «Հայոց Եկեղեցին Կիլիկեան շրջանում», էջ 14,15:

3) Պ. Թովմասեան, Աղթամարի թագաւորը՝ Սմբատ Արծրունի Սեֆեդինեան, Երեւան 2022:

(«ՊԱՏՄԱՔԱՂ» թիւ 33 - 12 նոյ. 2023 թ.)

Ջուղայի ոչնչացուած խաչքարերի մեծ մասն արուեստի գլուխգործոցներ էին, որը ռասիզմի հիմքով վանդալիզմ է

Գարդման-Շիրան-Նախիջեւան Համահայկական միութիւնը յայտարարութիւն է տարածել Ջուղայի հայկական խաչքարերի ոչնչացման կապակցութեամբ: «Արմէնպրէս»-ի փոխանցմամբ՝ յայտարարութեան մէջ, մասնաւորապէս, ասուած է.

«Դեռեւս 2003 թ. դեկտեմբերի 4-ին Ադրբեջանի կողմից հայկական խաչքարերի ոչնչացման կապակցութեամբ մի խումբ հայ պատմաբաններ եւ հնագէտներ պաշտօնական բողոք են ներկայացրել համապատասխան միջազգային կազմակերպութիւններին: Այդ ժամանակ վերսկսուել էր Ջուղայի հայկական գերեզմանատան համակարգային ոչնչացման ակտը, որի դրւագները արձանագրուել էին դեռեւս 1998 եւ 2002 թւականներին՝ արժանանալով միջազգային հանրութեան զայրոյթին ու կշտամբանքին:

Սակայն որեւէ կոչ ու մեղադրանք ի զորու չեղաւ հեռացնել բարբարոս ադրբեջանական ջարդարար ձեռքը համաշխարհային քրիստոնէական քաղաքակրթական երեւոյթի՝ խաչքարի համակարգային ու նպատակադիր ոչնչացումից: 2005 թ. տեղի ունեցաւ Ջուղայի հայկական գերեզմանատան տապանաքարերի ու խաչքարերի ոչնչացման վերջին արարը:

2006 թ. ադրբեջանական կառավարութիւնը թոյլ չտուեց Եւրոպառլամենտի ներկայացուցիչներին այցելել Ջուղա, ինչը յանցանքը քողարկելու յուսահատ փորձ էր: Ադրբեջանական քարոզչամեքենան կեղծում է պատմական իրողութիւնը՝ հերքելով հայկական ներկայութիւնը Նախիջեւանում անպատմելի ժամանակներից եւ քրիստոնէական յուշարձանները վերագրելով աղուաններին, սակայն տրամաբանական հարց է առաջանում, եթէ աղուանները ադրբեջանցիների նախնիներն են, ապա ինչու են ադրբեջանցիները ոչնչացնում «իրենց իսկ նախնիների ժառանգութիւնը» եւ դրա փոխարէն ռազմական հրաձգարան կառուցում:

Ջուղայի ոչնչացուած խաչքարերի մեծ մասն արուեստի իսկական գլուխգործոցներ էին, հայկական հոգեւոր ընկալումների արգասիքներ, որոնց ոչնչացումը ռասիզմի հիմքով վանդալիզմ է, ինչի վրայ կառուցուած են ադրբեջանական հասարակութեան ու աւտորիտար ռեժիմի հոգեւոր ընկալումները: 2020-2023 թթ. ռազմական գործողութիւններին եւ էթնիկ զտմանը յաջորդած մշակութային զտումը եւս գալիս է փաստելու ասածը:

Գարդման-Շիրան-Նախիջեւան Համահայկական միութիւնը, լինելով ոչ միայն պատմական Գարդմանից, Շիրանից եւ Նախիջեւանից բռնագաղթուած հայութեան ոտնահարուած իրաւունքների վերականգնման, այլեւ այդ տարածքներում հայկական մշակութային ժառանգութեան պահպանութեան խնդրի յանձնառու, պահանջում է ադրբեջանական իշխանութիւններից քաղաքական կամք դրսեւորել վերջ տալու այն բարբարոսութեանը, որն այսօր ընթանում է Լեռնային Ղարաբաղում, պատասխանատուութիւն կրելու կատարուած մշակութային ցեղասպանութեան համար, ինչը դէպի խաղաղ ու ապահով ապագայ տանող միակ ճանապարհն է:

Մենք կոչ ենք անում նաեւ միջազգային հանրութեանը, հեղինակաւոր իրաւապաշտպան կազմակերպութիւններին կոշտացնել Ադրբեջանի նկատմամբ խստոյթը, որովհետեւ նախկինում արձանագրուած կոչերն ու յայտարարութիւնները մշտապէս անտեսւել են միջազգային իրաւունքը առաւելագոյնս ոտնահարող ադրբեջանական վարչակարգի կողմից»:

24News

Արգենտինայի «Մասիս» պարային համոյթը 30 տարեկան է

Նոյեմբերի 25-ին Բուէնոս Այրէսի «Բելգրանօ» սրահում, Սերխիո Կնիասեանի ղեկավարութեամբ, Հայ Եկեղեցու «Մասիս» հայկական պարի համոյթը նշեց իր հիմնադրման 30-ամեակը:

Աղ ու հացի արարողութեամբ ընդունելութիւնից յետոյ Արա Գէորգեանի «Արցախ» ստեղծագործութեան հնչիւնների ներքոյ՝ սկսւեց երկու մասից կազմւած համերգը: Կատարուեցին խմբակային պարերի ընտրանի՝ Քոչարի, Ամապոլաս, Հորոն, Տասներու, Մելիքներ, Ռանգուի, Արաքէլ, Հին Գիւմրի եւ այլն: Համերգի ընթացքում հնչեցին Արամ Խաչատրեանի ստեղծագործութիւնների ներքոյ բեմադրւած պարային կոմպոզիցիաներ՝ նւիրւած Կիլիկիայի հայկական թագաւորութեան ժամանակաշրջանի:

«Մենք ենք մեր սարերը» ֆիլմը «Նուռ» միջազգային կինոփառատօնում հանրութեան քւէարկութեամբ ընտրւել է որպէս լաւագոյն վաւերագրական ֆիլմ

Ատոմ Էգոյեանի եւ Ֆեդերիկօ Լեմոսի «Մենք ենք մեր սարերը» ֆիլմը Կանադայի Տորոնտօ քաղաքի Համազգային թատրոնում անցկացւած «Նուռ» միջազգային կինոփառատօնին, հանրութեան քւէարկութեամբ ընտրւել է որպէս լաւագոյն վաւերագրական ֆիլմ:

Յատուկ հիւրի կարգավիճակով ֆիլմի ռեժիսոր ուրուգւայցի Ֆեդերիկօ Լեմոսը մրցանակը ստանալուց դիմեց հանրութեանը, դատապարտեց Ադրբեջանի ներխուժումն Արցախի տարածք եւ պահանջեց հետեւողական լինել եւ պաշտպանել աւելի քան 100 հազար արցախցիների իրաւունքը:

Փառատօնին ներկայացւած էր 68 ֆիլմ աշխարհի 14 երկրներից:

Նշենք, որ «Մենք ենք մեր սարերը» միակ լատինաամերիկեան ֆիլմն էր, որը ներկայ էր հեղինակաւոր կինոփառատօնին:

««Նուռ» կինոփառատօնի 16-րդ թողարկումը նկարագրելիս վերջին իրադարձութիւնների պատճառով մենք դժկամութեամբ ենք օգտագործում «քաղցր» բառը: Այնուամենայնիւ, այն, ինչ մենք կարող ենք անել, 68 յիշարժան ֆիլմ է առաջարկել՝ օգնելու միջոցներ հաւաքագրել եւ օգնել փախստականներին, ովքեր բռնի կերպով աքսորւել են Արցախի իրենց սուրբ հողերից»,- յայտարարել են փառատօնի կազմակերպիչները:

Բացառիկ...

(Շար. 4-րդ էջից)

Աբրահամ Գուրգէնեանի կրպակում ներկաները ոչ միայն դիտեցին նրա կերտած շիրմաքարերի նկարչութիւնները, այլ նաեւ դրանց շարժունակ պատկերը պատի վրայ ցուցադրւած:

Աւարտին, Եփրեմ Խանի բաժնում, բոլորը ծանօթացան նրա սխրագործութիւններին եւ իհարկէ կերպարին՝ նրա դերը մարմնաւորողի շնորհիւ:

Այս միջոցառումը, որը հիանալիօրէն պատկերում էր Նոր Ջուղայի պատմական անցեալից ու կենցաղից մի փունջ, լայն ընդառաջում գտաւ ժողովրդի կողմից՝ հիացմունք պատճառելով պարսիկ հայրենակիցներին, իսկ առաւել հպարտութեան առիթ հանդիսանալով նորջուղայեցիներին, յատկապէս կիրառած նորագոյն տեխնիկայի առումով առաջինը լինելով Սպահանում:

Ներկայ գտնուեցին նաեւ մի շարք բարձրաստիճան պաշտօնատարներ, որոնց դիմաւորում եւ ուղեկցում էին Թեմական խորհրդի անդամները:

Հիւրերի շարքում էին՝ Սպահանի Մշակութային ժառանգութեան պահպանման, զբօսաշրջութեան եւ ձեռարուեստի գլխաւոր տնօրէն Համիդռեզա Մոհաղեղեանը եւ սոյն գերատեսչութեան այլ տնօրէնները, Սպահանի 5-րդ շրջանի քաղաքապետարանի տնօրէն Հոսէյն Քարգարը՝ իր ընտանիքով, Սպահանի Ազգային արուեստի թանգարանի տնօրէնութիւնն ու աշխատակիցները, Սպահանի քաղաքապետարանի Մշակութային եւ սոցիալական հարցերի տեղակալն ու նրա ընտանիքը եւ մի քանի տնօրէններ եւ Սպահանի թանգարանների միութեան ներկայացուցիչները:

Ծրագրի բեմադրիչներն էին՝ Ռիմա Սիմոնեանն ու Կարին Տէր-Մարտիրոսեանը, իսկ սփռող բացատրութիւնների ձայնագրման համար բնագիրն ընթերցել էր Արթին Քեշիշեանը: Անիմատորի աշխատանքն իրականացրել էր Էլահէ Ռաֆիին: Զայնի էֆեկտի պատասխանատուն եւ «Հորովել»-ի կատարողն էր Հարմա Կարապետեանը:

Դերերը մարմնաւորեցին՝

Հայդուկ Վարդեւանեան եւ Առնօ Սիմոնեան՝ խոջան եւ աշակերտը

Վանանդ Իսաղուլեան եւ Արգին Ղարիբեան՝ Խաչատուր վրդ. Կեսարացին եւ աշակերտը

Նազէ Ասատրեան եւ Վանէ Խաչիկեան՝ նոր ջուղայեցի կին եւ իր դուստրը

Դաւիթ Թորոսեան՝ Եփրեմ Խան

Թղթակից (Նոր Ջուղա)

ՄԱՀԱԶԴ - ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ

Խոր վշտով համակուած յայտնում ենք, որ մեր շատ սիրելի եւ թանկագին՝

ԾԱՂԿԱՆՈՅՇ (ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ) ՊԵՏՐՈՍԵԱՆԻ

ցաւալի մահը, որը տեղի ունեցաւ նոյեմբերի 11-ին, Ամերիկայում:

Հանգուցեալի մահուան առթիւ՝ ուրբաթ, դեկտեմբերի 8-ին, Թեհրանի Ս. Մինաս եկեղեցում, ս. պատարագից յետոյ կը կատարուի՝

ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ

Յաւակցութիւնները՝ եկեղեցում:

ՍԳԱԿԻՐՆԵՐ՝

Շաքէ, Էդուարդ եւ Առնօ Զարգարեաններ՝ դուստրը, փեսան եւ թոռը:

Իւեդ, Վահէ եւ Արին Աղախանեաններ՝ դուստրը, փեսան եւ թոռը:

Անիֆա եւ Արին Ազջաններ՝ թոռնուհին եւ իր ամուսինը:

Զարգարեան, Աղախանեան, Յարութիւնեան, Պետրոսեան, Յովհաննիսեան, Առաքելեան, Բարսեղեան, Խաչատրեան, Մելիքեան եւ Եղոյեան ընտանիքներ՝ հարազատները եւ խնամիները:

ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ

Խոր վշտով համակուած յայտնում ենք, որ մեր շատ սիրելի եւ թանկագին՝

ՓԱՌՔՈՒՀԻ ՂԱԴԻՄԵԱՆԻ (ՆԱԶԱՐԲԷԳԵԱՆ)

ցաւալի մահուան քառասնօրեակի առթիւ՝ ուրբաթ, դեկտեմբերի 8-ին, Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցում, ս. պատարագից յետոյ կը կատարուի՝

ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ

Յաւակցութիւնները՝ եկեղեցում:

ՍԳԱԿԻՐՆԵՐ՝

Նազարբէգեան, Ղադիմեան, Նիկոլայեան, Սարգսեան եւ Մարխանեան ընտանիքներ՝ հարազատները եւ խնամիները:

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ

Այսու ազգային մարմինների, հիմնարկութիւնների, միութիւնների, դպրոցների եւ ընկերութիւնների ու բոլոր յարգելի ընթերցողների ուշադրութեանն ենք յանձնում, որ իրենց

յայտարարութիւնները օրաթերթիս յանձնեն առ. ժամը 8-ից մինչեւ կ. յ. ժամը 2-ը

ամենաուշը երեք օր (աշխատանքային օր) նախքան տպագրութեան թւականը,

բացի

մահազդերից,

որոնք ընդունւում են նաեւ նոյն օրը առաւօտեան՝ մինչեւ ժամը 9-ը:

«ԱԼԻՔ» ՕՐԱԹԵՐԹ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Օժանդակելու համար օրաթերթիս՝ կարող էք ձեր հին թղթերը յանձնել

«Ալիք» օրաթերթին՝ առաւօտեան ժամը 8-ից մինչեւ ժամը 20:00-ը

(Մեծ քանակութեան պարագայում՝ նախապէս համադրելու խնդրանօք)՝ հետեւեալ հասցէով.

Հիւսիսային Սոհրեւարդի պող., Սոհեբի փողոց, համար 16

Հեռ.՝ 88761154

«ԱԼԻՔ» ՕՐԱԹԵՐԹ

Ովքե՞ր են....

(Շար. 2-րդ էջից)

հայերը ոչ մի կապ չունեն ուրարտական ժառանգութեան հետ, ինչի արդիւնքում սեփականել են Ուրարտուն... Ու այսքանից յետոյ ՀԺ-ին հարցազրոյց տալ ու ասել՝ որեւէ հիմք չկայ, որով կարող են պնդել, թէ դասագիրքը գրուած է թուրքական ազգայնամոլական պատմագիութեան մոդելի հիման վրայ: Իսկ ես ասում եմ՝ կայ: Հիմքը հէնց Ուրարտուն յանձնելն է թուրքերին՝ Արցախի բարեյաջող յանձնումից յետոյ: Հիմքը հէնց դասագրքում էրեբունի - Երեւան օրգանական կապի խզումն է:

Վահրամ Սողոմոնեանն անձնիպաշտ պաշտպանելով հեղինակ Սմբատ Յովհաննիսեանին՝ փաստում է, որ նա դասագիրքը միայնակ գրել է՝ խորհրդակցելով բազմաթիւ խորհրդատուների հետ: Հարց՝ ովքե՞ր են նրանք: Միգուցէ այդ դասագրքի չափորոշիչներն ստեղծողներից յայտնի Լիլիթ Մկրտչեա՞նը, ով թուրքերի հետ եւ Թուրքիայի «Պատմութիւն» հիմնադրամի միջոցով իրականացած ծրագրերից մէկով, ստանալով մօտ 20 հազար եւրօ բիւջէ, նպատակ էր հետապնդում «մարտահրաւէր նետել պատմութեան դասագրքերում առկայ թշնամու կերպարներին եւ ներկայիս պատմական գործընթացներին, ինչը կը խթանի պատմութեան ուսուցումը Հայաստանում եւ Թուրքիայում», թէ՞ Բրիւսովի շրջանաւարտ, այդ նոյն մերժած ու վտանգաւոր չափորոշիչները ատամներով պաշտպանող, ՔՊ-ական պատգամաւոր Մարիա Կարապետեանը, ով այդ նոյն Լիլիթ Մկրտչեանի ու կրկին Թուրքիայի «Պատմութիւն» հիմնադրամի եւ թուրք հեղինակների հետ համատեղ 2017 եւ 2019 թւականներին հրատարակել է «Պատմութեան ուսուցումը Թուրքիայի եւ Հայաստանի դպրոցներում. քննադատութիւն եւ այլընտրանքներ» եւ «Պատմութեան ուսուցման այլընտրանքային չափորոշիչները Հայաստանի եւ Թուրքիայի համար» ձեռնարկները, որտեղ Հայաստանը (հայոց հայրենիք Հայկական լեռնաշխարհը) անուանել է Անատոլիա (էջ 52) կամ քննադատել «Հայոց պատմութիւն» դասագրքի նախորդ հեղինակներին՝ այն բանի համար, որ նրանք դասագրքում «զարմանալի արագութեամբ» ներառել են Ապրիլեան քառօրեան հերոսացնող դրւագներ:

Կրկնում եմ՝ ովքե՞ր են այդ «թաքնուած» խորհրդատուները, որտե՞ղ են ապրում, ինչո՞վ են զբաղւում, կարելի՞ է իմանալ դրանց անունները:

Եւ վերջում. մեկնաբանութիւններում կը դնեմ աղրբէջանական ալիքի՝ հայ գիտնականներին ծաղրող ու վիրաւորող տեսանիւթը: Թէ ում կամ ինչն է յիշեցնում այն՝ թողնում եմ մարդկանց դատողութեանը»:

ԱԼԻՔ
Օրաթերթ

Արտօնատէր՝ ԱԼԲԵՐՏ ԱՃԵՄԵԱՆ
Հեռախօս՝ (0098-21) 88768567 - 88761154
Հեռապատճէն՝ 88760994
Փոստարկղ՝ 11365-953 Թեհրան - Իրան

آلیک
روزنامه سیاسی، اجتماعی، ادبی و هنری
صاحب امتیاز: موسسه جمعیت ادبی آلیک
مدیر مسئول: آلبرت عجمیان
خیابان سهروردی شمالی، خیابان شهید محبی، پلاک ۱۶
کدپستی: ۱۵۵۸۸۳۳۹۱۱
تهران صندوق پستی: ۹۵۳-۱۱۳۶۵ فاکس: ۸۸۷۶۰۹۹۴
تلفن: ۸۸۷۶۱۱۵۴ – ۸۸۷۶۸۵۶۷ چاپخانه آلیک

ALIK ARMENIAN DAILY
Add.: 16, Shahid Mohebi Ave., North Sohravardi Ave.,
Tehran 1558833911, Iran P. O. Box: 11365-953
Tel.: (0098-21) 88768567 -88761154
Fax: 88760994

E-mail : info@alikonline.ir
www.alikonline.ir

ԱՄԷՆ ՏԵՍԱԿԻ
ԼՒԱՑՔԻ ԵՒ ԱՄԱՆ ԼՒԱՑՈՂ
ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՆՈՐՈԳՈՒՄ
ԲՆԱԿԱՐԱՆՈՒՄ
Հեռ. 26320084 եւ 09124187835,
Վահիկ Իսկանդարեան

Computer AGMA
Համակարգչային ընկերութիւն
خرید و فروش کامپیوتر
ارتقاء سیستم
سرویس در محل
سخت افزار
نرم افزار
شبکه
Tel: 88849305 & 88842385
ایرانشهر شمالی، کوچه نوشهر، پلاک ۳۲، واحد ٦

ՆՈՐ ՏԱՐԻԱՅ ՆՒԷՐՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՈՒՄ

Թեհրանի Հայ կանանց բարեգործական ընկերութիւնը

Նոր տարւայ սեմին կարիքաւոր ընտանիքներին օգնելու համար՝

նւէրներ է ընդունելու բարեսէր հայրենակիցներից:

Ցանկացողներից խնդրւում է իրենց օգնութիւնները յանձնեն վարչութեանը

կիրակի, դեկտ. 17-ին, 2023 թ.,

առ. ժամը 10:00-ից

մինչեւ ժամը 16:00-ը:

Հասցէ՝
Ջոմհուրի պողոտայ, Միրզա Քուչաք խան պողոտայ,
Ս. Աստուածածին եկեղեցու շրջափակ

Հեռ.՝ 66700170

Թ. Հ. Կ. ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՏԱՐԵԿԱՆ ԲԱԶԱՐ

Թեհրանի Հայ կանանց բարեգործական ընկերութեան

տարեկան վաճառքը

տեղի է ունենալու հինգշաբթի եւ ուրբաթ, դեկտ. 21-ին եւ 22-ին, 2023 թ., առաւօտեան ժամը 10:00-ից մինչեւ 17:00-ը, Ս. Աստուածածին եկեղեցու շրջափակում

Վաճառւելու են՝

սփռոցներ, սալֆետներ, սրբիչներ, խոհանոցային պիտոյքներ, տնային թխուածքներ

Ձեր մասնակցութեամբ
օգտակար հանդիսացէք մեր կարիքաւորներին:

Հասցէ՝ Ջոմհուրի պողոտայ, Միրզա Քուչաք խան պողոտայ, Ս. Աստուածածին եկեղեցու շրջափակ

Հեռ.՝ 66700170

Թ. Հ. Կ. ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

آژانس مسافرتی
هفت ستاره آسمان آفتابی
7 STARS
هواپیمایی قشم
Qeshm Air
هواپیمایی ایران ایرتور
IRAN AIRTOUR AIRLINES
VARESH AIRLINES
هواپیمایی وارش
Armenia airways
7setaretours
خدمات آژانس مسافرتی هفت ستاره آسمان آفتابی :
✦ Հայաստանում՝
Ամերիկայի եւ Կանադայի դեսպանատների հերթագրման ապահովում
✦ Թուրի անմիջական գործադրողը՝
Հայաստանում եւ աշխարհի այլ վայրերում
مجری مستقیم تور در ارمنستان و دیگر نقاط جهان
09303810625 WhatsApp tel: 021-88796742-3

«Առաջին....

(Շար. 1-ին էջից)

էին իրենց տեքստերին, գրաւոր ու բանաւոր հրապարակումներին, հայեացքներին: Խօսքը միայն «ռեժիմի պարագլխի» մասին չէ, այլ միւսները եւս: Իրենք միշտ են ունեցել հակահայկական եւ հակարցախեան հայեացքներ միշտ դէմ են եղել հայկական հողահաւաքի գաղափարին եւ Հայ Դատի գաղափարին, ուղղակի իրենց իշխանութեան գալու նախորդող երկու տարիների ընթացքում 2016-2018 եւ 2018-2020 թւականին տեսնում էին Արցախի հարցը ազգայնական թեմատիկան մեծ ժողովրդականութիւն ունի, եւ այդ թեման էին շահարկում, շահաբաժիններ ստանալու համար:

Էլբակեանը ընդգծեց, որ 2016-2018 թւականին ներկայիս դէ ֆակտո վարչապետը ազատագրուած տարածքների փոխանակման մասին էր խօսում, եւ յայտարարում էր «Արցախը Հայաստան է եւ վերջ» ոչ թէ որովհետեւ ինքը ցանկանում էր այդ պահել, այլ, իրականում, դրա վրայ թքած ունէին, եւ եթէ թքած չունենային չէին կատարի այդ արտաքին ու ներքին քայլերը, որոնք յանգեցրին պատերազմի եւ մեր պարտութեանը: Օրինակ, փաստացի չէին լուծարի առաջին կորպուսը, որը ըստ մեր բանակի տրամաբանութեան պէտք է ապահովէր Արցախի հարաւային ճակատը պատերազմի դէպքում, իսկ իրենք համարեա լուծարման հասցրեցին այդ կորպուսը:

Ինչ վերաբերում է Ադրբեջանի հետ «խաղաղութեան պայմանագրի» կնքմանը, քաղաքագէտը շեշտեց, որ բնականաբար Ալիեւն ամբողջ Հայաստանի տարածքն է ցանկանում գրաւել եւ այն այնքան ակնայտ է, որ նոյնիսկ այս իշխանութիւնների արտաքին գործերի նախարարն է այդ մասին յայտարարում եւ վկայում է, որ Ադրբեջանի եւ Թուրքիայի համար այն ամբողջական եւ լիակատար հակամարտութիւն է:

«Մենք ձախողել էինք նրանում, որ դեռ նախքան դէ ֆակտո իշխանութիւններն հակամարտութիւնը ընկալել էինք, որպէս տեղային եւ այդպէս էլ կոչում էինք, բայց այդ պատերազմը ինքը հայ-ադրբեջանական, նոյնիսկ հայ-թուրքական էր, որովհետեւ Ադրբեջանի ստեղծողը եւ հովանաւորը Թուրքիան է, եւ որքան էլ թւայ ուշ է, եւ հնարաւոր չէ բան փոխել, բայց հնարաւոր է եւ առաջին հերթին պէտք է այդ մտայնութիւնը փոխել, որ ինչ որ բան տալով կարելի է խաղաղութեան հասնել եւ երկրորդը այն, որ խնդիրը զուտ ինչ-որ տարածքի մէջ է»,- նշեց նա:

ՍԻՒՆԷ ՖԱՐՄԱՆԵԱՆ

Իրանը....

(Շար. 1-ին էջից)

եւ Թուրքմենստանը պէտք է կոնսենսուսի հասնեն Կասպից ծովի վերաբերեալ իւրաքանչիւր որոշման շուրջ:

Ընդգծելով ափամերձ հինգ պետութիւնների միջեւ սերտ համագործակցութեան անհրաժեշտութիւնը՝ Ամիր Աբդօլլահեանն ասել է, որ Կասպեան տարածաշրջանում անվտանգութիւնն անբաժանելի է, եւ ափամերձ բոլոր պետութիւնները պատասխանատուութիւն են կրում դրա համար:

Համագործակցութիւնն անուանելով «Կասպից ծովը բարեկամութեան խորհրդանիշի վերածելու միակ միջոցը»՝ նա առաջարկել է համապատասխան մեխանիզմները կառավարող քարտուղարութիւն ստեղծելու գաղափարը:

«Անհրաժեշտ է ամրապնդել տնտեսական, առեւտրային եւ տրանսպորտային համագործակցութիւնը՝ որպէս մերձկասպեան երկրների զարգացման եւ առաջընթացի շարժիչ ուժ»,- ասել է Ամիր Աբդօլլահեանը:

ԱԼԻՔ-ի Internet-ային էջն է՝ www.alikonline.ir

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Այսու Թեհրանի մեր հաւատացեալ ժողովրդի զաւակներին յայտնում ենք, որ առաջիկայ երկուշաբթի, դեկտեմբերի 11-ին, 2023 թ. փօնն է **Ս. Մինասի: Ս. Մինասի փօնը համընկնում է Վանաքի Ս. Մինաս եկեղեցու անուանակոչութեան փօնին:**

Արդարեւ այս առիթով Ս. Մինաս եկեղեցում հովանաւորութեամբ Թեհրանի հայոց թեմի առաջնորդ Գերշ. Տ. Սեպուհ Ս. արք. Սարգսեանի, երկուշաբթի, դեկտեմբերի 11-ին, 2023 թ. մատուցելու է հանդիսաւոր ս. եւ անմահ պատարագ:

Պատարագելու եւ քարոզելու է հիւրաբար քաղաքս գտնուող՝

Հոգեշնորհ Տ. Վիգէն վրդ. Տալգլըճեանը

Սկիզբ ժամերգութեան	ժամը 9:00-ին
Ս. պատարագ	ժամը 10:00-ին
Քարոզ	ժամը 11:00-ին

Մեր ժողովրդի զաւակներին հրաւիրում ենք՝ ներկայ լինելու կրօնական արարողութեանը եւ ս. պատարագին՝ հաղորդուելու համար սուրբի յիշատակով եւ վերաթարմացնելու քրիստոնէական իրենց հաւատքը:

ԴԻՒԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ԹԵՀՐԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ

Ծանօթ.-

Բոլոր այն հաւատացեալ ուխտաւորները, ովքեր ուզում են նւիրատուութիւն կատարել կամ մատաղ զենել, թող բարի լինեն կապ պահել Ս. Մինաս եկեղեցու խորհրդի հետ:

Երկու տարբեր թռիչքներ դէպի՝ Հայաստան
ԹԵՀՐԱՆ - ԵՐԵՒԱՆ - ԹԵՀՐԱՆ
IRAN AIRTOUR AIRLINES
Qeshm Air
برای تهیه بلیط می توانید با
شرکت حمل و نقل بین المللی و مسافرتی ستی
agency@sati-co.com ۹ -۸۸۵۴۱۲۹۸ و ۵-۸۸۵۴۱۲۴۲-۰۲۱
و در شهر اصفهان با آژانس آرمان گشت «ناربه ژاردن» ۰۹۱۳۳۰۰۸۰۲۹
و شباهنگ سیر «رافیک خداوردیان» ۰۹۱۳۳۰۵۳۸۳۵ تماس حاصل نمایید.
«ԲԱԶԷ» ՃԱՄԲՈՐԴԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆ
آژانس مسافرتی «بازه»
BAZE TOUR & TRAVEL AGENCY
Հասցէ՝ Կոմիտաս 20, բն. 22, Երեւան, Հայաստան
Հեռախօս՝ +374 965 75 305 եւ + 374 102 22 824
نشانی: خیابان کومیتاس، شماره ۲۲، ایروان – ارمنستان تلفن: ۸۲۴ ۲۲ ۱۰۲ ۳۷۴+ , ۳۰۵ ۷۵ ۹۶۵ ۳۷۴+
Address: Komitas St., Bld.20, Apt. 22 E-mail: info@bazetravel.am

Նասեր Քանանի.

«Դիմադրութեան խմբերը, սիոնիստական մանկասպան ռեժիմի պատերազմական ոճրագործութիւններին արձագանգելու համար Իրանից ուղղութիւն չեն ստանում»

«ԱԼԻՔ» - Իրանի արտաքին գործերի նախարարութեան պաշտօնական ներկայացուցիչ Նասեր Քանանին յայտարարել է, որ տարածաշրջանում Դիմադրութեան ուժերը սիոնիստական ռեժիմի պատերազմական ոճրագործութիւններին պատասխանելու համար Իրանից ուղղութիւն չեն ստանում:

ԻՌՆԱ-ի համաձայն՝ Նասեր Քանանին ընդգծել է. «Նրանք իրենց հայեցողութեամբ, գործում են իրենց սկզբունքների, երկրի ու ժողովրդի շահերի համաձայն»: Նա հերքելով Բրիտանիայի կառավարութեան անհիմն ամբաստանութիւնները Կարմիր ծովում կատարուած յարձակումները Իրանին վերագրելու առումով, ասել է. «Նման յայտարարութիւններ կատարում են քաղաքական կոնկրետ նպատակներով եւ ապացուցում են Բրիտանիայի պաշտօնատարների ջանքերը՝ սիալ ներկայացնելու տարածաշրջանի իրականութիւնը եւ, նաեւ, ապացուցում է, որ նրանք ազդեցութիւն են կրում երրորդ կողմից, այդ թւում՝ մանկասպան սիոնիստական ռեժիմի ցանկութիւններից»: ԱԳՆ խօսնակը դատապարտելով Բրիտանիայի որոշ պաշտօնատարների ապակառուցողական յայտարարութիւնները ու գործողութիւնները, որոնք հանդիսանում են տարածաշրջանային եւ միջազգային խաղաղութեանն ու կայունութեանը սպառնացող գործօն, ասել է. «Ինչպէս նախապէս էլ յայտարարել ենք, տարածաշրջանում Դիմադրութեան խմբերը, սիոնիստական մանկասպան ռեժիմի ցեղասպանութիւններին ու պատերազմական ոճրագործութիւններին արձագանգելու համար Իրանի Իսլամական Հանրապետութիւնից ուղղութիւն չեն ստանում»:

Քանանին Բրիտանիայի պաշտօնատարներին խորհուրդ է տուել, որ անհիմն մեղադրանքներ հնչեցնելու փոխարէն դատապարտեն սիոնիստական օկուպանտ ռեժիմի ոճրագործութիւնները եւ իրենց ջանքերը կենտրոնացնեն կասեցնելու համար Պաղեստինի քաղաքացիների, կանանց ու երեխաների դէմ սիոնիստական ռեժիմի պատերազմական ոճրագործութիւնները, եւ դիւրացնեն մարդասիրական օգնութիւնների տրամադրումը՝ ըստ, միջազգային պարտաւորութիւնների ու օրէնքների:

SET Coffee
فروشگاه: هفت تیر، قائم مقام فراهانی، خیابان فجر، پلاک ۱۰
کارخانه: شهرک صنعتی خوارزمی، بلوار هاگنولیا، پلاک A117
0936-6726563
021-88305827
www.set-coffee.com
قهوه ست

املاک هنرمندان
● بزرگترین آژانس مسکن
مرکز شهر تهران (منطقه ۶)
● خانه های قدیمی تخصص ماست
آدرس: میدان هفت تیر، کریمخان،
خردمند شمالی، نبش دی، ساختمان ۱۱۹، پلاک ۴
تلفن: ۸۸۸۴۵۵۶۶ – ۸۸۸۴۵۵۷۷
واتس آپ: ۰۹۱۲۹۵۸۵۱۴۰
مدیر داخلی (هماهنگی): ۰۹۳۰۹۲۱۳۷۲۴
مدیریت: ۰۹۱۹۴۳۱۸۳۱۹ امیر قربانی

ՔԱՐԻՄԻ
Գորգերի, սառնարանների եւ գազ սպառող զովամուղի, կահոյքի եւ անտիկ իրերի լաւագոյն գնորդ
خریدار فرش، یخچال فریزر، کولر گازی،
مبلمان، خرده ریز و لوازم آنتیک
Հեռ.՝ 88594063 եւ 09 12 11932 12

«Արարատ»
Ամէն տեսակ տնային իրերի գնորդ
سماور ذغالی، نقره جات، ظروف مسی،
چراغ لاله و لوستر،
رادیو لامپی ، رادیوگرام مبله، صفحه گرام ،
لوازم چوبی آنتیک و خرده
Հեռ.՝ 88523388

Վարդան Ոսկանեան.

«Ադրբեջան կոչւող արհեստածին կազմաւորումը մինչեւ 1918 թ. երբեք չի եղել եւ չի ունեցել ինքնութիւն»

Հայաստանում հիմա փորձում են ապացուցել, որ հազարամեակների պետականութեան աւանդոյթ ունեցող մեր երկիրը պատմութեան մէջ երբեւէ գոյութիւն չունեցած ինչ-որ «Արեւմտեան Ադրբեջան» չէ: Այս մասին գրում է իրանագէտ Վարդան Ոսկանեանը:

Նա նաեւ նշել է. «Մինչդեռ պարադոքսն այն է, որ Ադրբեջան կոչւող արհեստածին կազմաւորումն ինքը մինչեւ 1918 թ. երբեք Ադրբեջան չի եղել եւ չի ունեցել որեւէ առանձին բիւրեղացած ինքնութիւն ու պետականութիւն, ուստի նաեւ դրա աւանդոյթ:

Պատմական եւ իրաւական լեգիտիմութեան առումով բացարձակօրէն խոցելի այս կազմաւորումը գոյացել է հայութեան, իրանական եւ կովկասեան ժողովուրդների բնիկ տարածքների վրայ օսմանեան սիւների միջոցով, ցեղասպան ծաւալապաշտական քաղաքականութեան եւ պանթուրքական այլատեաց գաղափարախօսութեան հետեւանքով:

Հետեւաբար, խնդիրը ոչ թէ «Արեւմտեան Ադրբեջան» բարբաջանքն է, այլ հէնց արհեստածին Ադրբեջանն ինքը, ինչից բխում է, որ լուծումներն էլ բոլորովին այլ դաշտում են»: